## Արձանագրություն N 22/1-4

**"ՔԵՆԴԼ-ԳՀԾՁԲ-22/1"** ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին որոշելու նպատակով հրավիրված միաժամանակյա բանակցությունների վարման նիստի

ք. Երևան 29 նոյեմբերի 2020թ. Ժամը 14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Գյուլումյան,

Անդամներ՝ Ա. Պետրոսյան,

Ա.Վարդանյան, Ստ. Թաթիկյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Բաղրամյան

Սույն նիստը հրավիրվել է ի կատարումն ՔԵՆԴԼ-ԳՀԾՁԲ-22/1 ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման նիստում (26.11.2021թ.) գնահատող հանձնաժողովի կայացրած թիվ 22/1-3 Որոշման՝ «Ընթացակարգի բոլոր մասնակիցներին 29.11.2021թ.-ին ժ.14:00-ին հրավիրել միաժամանակյա բանակցությունների՝ Ընտրված մասնակցին որոշելու նպատակով»: Նիստի վարման կարգի համար հիմք են ընդունվել ՔԵՆԴԼ ՍՀԻ կողմից 17.11.2021թ. հրապարակված «Անվտանգության ապահովման (Պահնորդական) ծառայությունների ձեռքբերման» հրավերի 1-ին մասի 8.7 կետի դրույթները:

Սույն նիստին հրավիրվել են հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր 6 մասնակիցները:

Նիստին ներկայացան՝ «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ (տնօրեն՝ Էդիգար Թովմասյան), «ԿՈՄԱՆԴԻՐ ՍԵՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ (տնօրեն՝ Արմեն Գաբրիելյան), «Քինգ Մարշալ» ՍՊԸ (տնօրեն՝ Դավիդ Հովհաննիսյան):

Բանակցությունների վերջնաժամկետը լրանալու պահին «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ն նոր գնային առաջարկ չներկայացրեց: Նիստին ներկա մյուս մասնակիցների առաջարկած վերջնական գները հետևյալն են՝

| մասնակցի անվանումը | մասնակցի առաջարկած վերջնական գինը, ՀՀ դրամ | | մասնակցի ստորագրությունը |
|---|---|---|---|
| | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | |
| «ԿՈՄԱՆԴԻՐ ՍԵՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ | 3 298 000 | 3 957 600 | |
| «Քինգ Մարշալ» ՍՊԸ | 3 298 000 | 3 957 600 | |

Գների իջեցման շուրջ կայացած միաժամանակյա բանակցությունների արդյունքում ՔԵՆԴԼ-ԳՀԾՁԲ-22/1 ծածկագրով Գնման ընթացակարգի 2 մասնակիցների առաջարկած վերջնական գները հավասար են: Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ **Որոշում թիվ 22/1-4**

Մրցույթը հայտարարվում է ՉԿԱՅԱՑԱԾ:

**Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:**

Նիստին ներկա հանձնաժողովի անդամները

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Միքայել Գյուլումյան

Անդամներ՝ _____ Արմեն Պետրոսյան

_____ Աշոտ Վարդանյան

_____ Ստեփան Թաթիկյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Արծրուն Բաղրամյան